

պեղ. ուղղին հարցուցել են՝ թէ էր է վեղգ ծուռ. սխտասխանել է. ուշի ուշով նայեցէք և ինձ հասկացուցէք, թէ ո՞ր տեղս է ուղեղ. իսկոյն լիզուս խածի և լռեցի, որ մեր ազգի աշխատասիրաց ևս ժամանակ տամ առ իմ բացազանու թիւնն

առնել իւրեանց գոհացուցիչ արձագանքըն, որում ի բաղմաց հետէ կարօտ է մեր գրականութիւնն :

ՄԵՐՈՒՆԻ ԳԱՐՐԻԷԼ ՊԱՏՅԱՆԵԱՆ.

Ի ՄԱՀ ՄԵՏԻՆ ՆԵՐՄԻՍԻ.

### ԲԱՈՅԱԿԱՆ

Ի ՄԱՀ ՄԵՏԻՆ ՆԵՐՄԻՍԻ.

Լսէ՛ք, զի՛նչ գոյժ, զի՛նչ հառաչանք ընդ համօրէն Հայաստան,

Ողբ ի սօսեաց արմենակաց, ողբ ի յաղբիբց Բիւրակնեան :

Պոժ մեծամեծ ջայլէ ի Խախ շէնն յԵկեղեցաց գաւառին,

Փռւթամ և ես իրաց անդէտ՝ արտում տխուր զխօլին :

Ո՛հ, զի՛նչ աղէտ հարաւ աչացս և արտասուեաց տեսարան,

Երբ և կանայք գերաշխարան՝ հեղուն լալիս ողբաձայն :

Տէր, զի՛նչ իցէ, գոչեմ ինքնին, յեկեղեցին անդ մատչեմ,

Եհն մարմին, ջգիտեմ թէ ո՞րչա անդ լուսափայլ տեսանեմ :

Պար զնովաւ կրօնաւորաց, պերճապայծառ իշխանաց,

Պար զնովաւ և երգեցիկ մանկտին առներ տխրազգեաց :

Ենդուլ շրջեալ շուրջ զամբօխիւ իրին լինել խելամուտ,

Չեղև հնար ինձ յառաջիլ, այլ զիտէի ի բացուստ :

Ե՛յն ինչ ողբոց ձայն հարկանէր յիմ լսելիս հայերէն,

Սիրտ իմ ի վիշտ, յաչացս հոսէր յորդ արտասուք ուղխօրէն :

Բայց ըստ զիպաց ոմն ի խմբէն մեկնեալ ահա կրօնազգեաց,

Ես իս մեղմով ձգեաց զակնարկ՝ դէմք իւր տխուր մահազգեաց :

Թէպէտ թօշնեալ գեղ երեսացն, այլ աչք սիրուն լուսարիւր,

Ողբ և անշուշտ զնորայն հոգւոյն յայտ բերէին զանզոյգ տիպ :

Ուստի՞ դու գաս, ո՛ւմ ի ինչիր, և զի՛նչ յուզիս պատանի,

Եհարց նա ցիս, և խանդ սիրոյ բորբոքեցաւ ի սրտի :

Սրբաեսիլ զին՝ զոր տեսիւր կղեալ ի սուրբ զազազին,

Ուստի բուրմունք անմահականք ի հօտ անոյշ ծաւալին :

Ներսէսն է նա, Մեծն այն՝ Նիրսէս հովիւ Հօտին Բարձրելոյն,

Սուրբ շառաւիղ Պարթևական ի փշարեր յարմատոյն :

Երբ ուշ զիր ինձ, լուր բարբառոյս, ի վէպ արկից խկտպէս,  
 Օվարս նորա, գառիթ մահուն՝ և թէ առ ինչ այս հանդէս:  
 Քանզի գոյով անձամբ անձին անքուն սրբոյն կենակից,  
 Վարուց համայն Հայրապետիս եմ իրագէտ և անցից:  
 Ես Երշակաւ Հայ արքայիւ ծնաւ յորդոյն սուրբ Յուսկան,  
 Յորում շնորհք, ձերք անսանկուր ի տիս մատաղ մանկութեան:  
 Օգիտութիւն Ըստուածական ի Կեսարիա ընկալաւ,  
 Որում Երամ մեր Վահագնա յաղթող փառօք տիրացաւ:  
 Լեալ հանձարեղ ի Բիւզանդեան ի կայսերէն սիրեցաւ,  
 Ի հայրենիս և յայլ տեղիս ըզհամբաւի յոյժ հարաւ:  
 Երիաջանն իբրև եհաս յարբունս կենաց հասակի,  
 Ըմուննացաւ ընդ բարեպաշտ դասեր ուրումն իշխանի:  
 Ել ի բարձանց Եմնակալն իւր խորհրդովք երկնային՝  
 Վ իձակ կենաց կնքեաց նմա գոյ Հայր հանուր Հայ ազին:  
 Պեստի տարփմամբ համայն ազգին և հրեշտակօք արքունի,  
 Ի գութ շարժեալ փառօք դարձաւ յաշխարհն իւր հայրենի:  
 Պոչմամբ Հոգւոյն սուրբ Պարիզորի յԵթոս փառաց ամբարձաւ,  
 Վոր դահակալ աստուածընտիր սրբոյ Պահին կարգեցաւ:  
 Ջահ լուսալէր Հայոց ազգին իբրև պայծառ արեղակ,  
 Լուսաւորեաց զազգս Երածեան հոսմամբ քրտանցն անքանակ:  
 Բաց զգորոցս, որով ուսումն յորդիս Հայկաց անցաւ,  
 Օւղքատանոցս շինեաց անթիւ և վանօրայս յոյժ ամբաւ:  
 Մայր զթառատ կարօտելոց և աղքատաց համարիւր,  
 Եւ համօրէն ազգիս մերոյ ծարաւելոց սուրբ աղբիւր:  
 Լոյս գիտութեան՝ լոյս կրթութեան Հայկեան զարմին ծագեցաւ,  
 Ենթարկարդ կենաց խաւարն իսպառ իմէնջ մերժեցաւ:  
 Քանիցս միջնորդ, քանիցս սաստիչ այլեաց Յունաց յարձակման,  
 Որով զաշխարհ մեր Հայաստան անքոյթ պահէր անսասան:  
 Ստպեալ արթուն Արկեղեցւոյ անքուն աչօք պահապան,  
 Ըմրակառոյց նեցուկ պատուար գահին մերոյ արքունեան:  
 Եյն ինչ ի ծուփս իւր շարութեան ծփայր արքայն մեր Երշակ,  
 Պիմեաց անձամբ առ Վաղէս կայսր յօգուտ ազգին ի հրեշտակ:  
 Ո՛հ, շարափառն զնա յաքսոր վարէր ի տար աշխարհի,  
 Վաւն ի յալիս անդ խորտակի՝ զՎերսէսն հանէ ի կղզի:  
 Ենդէն հրաշիւք ձկամբ ծովուն զքաղցն հառանէ կերակրի,  
 Չէր անդ բնակ, փայր ամայի, չէր անդ ուսկան ձկնորսի:  
 Իբրև օրհասն ժպիրհ կայսեր զարև կենաց հասանէր,

Ա իձակ փառաց արքայական ի թէնդուն հասանէր :  
 Բարեացապարտն առ ինքն կոչէր վայիլ պատուով զՄեծն Աերսէս,  
 Որում անզոյք շնորհաց շողոյն զիտակ իսկ էր կանխապէս :  
 Եպա զՊայս օծ Արշակեան համայն Հայոց թագաւոր,  
 Հայցմամբ սրբոյն զօրօք ի Հայս Յոյն առաքեաց զօրաւոր :  
 Եստ Մեհրուժան՝ այն ամբարիշտն հեղոյր զարիւն համազգեաց,  
 Հեթանոսաց պիղծ պարսկական սպաս տարաւ օրինաց :  
 Եյս ազգուրաց գոռ գաւաճանն զճախատ մարտի պատրաստեաց,  
 Չանայր ըզՀայս ի պիղծ կրօն գարձուցանել Մաղղեղանց :  
 Ի ժամ մարտին յարիննազանդ Չիրաւ դաշտին Հայկազանց,  
 Մինչ յերկոցունց յառնէ շահնդ հոսի արիւն բանականց :  
 Ես ի գագաթ Ապատ լերին բազկատարած աղօթէր,  
 Եւ յաղթութիւն Հայ բանակին արասսուաթոր պաղատէր :  
 Յարեան հողմունք ընդզէմ Պարսից, գոռայ գօչէ մըրըրիկ,  
 Պունդ Պարսկական դորայ խռովի ընդ այս անսիւլ ահարեկ :  
 Ենդ ցօղազին զՀայոց զլիսով առնէր քաղցրիկ հովանի,  
 Վաջալերի բանակ Հայկեան այցելութեամբ Տէրունի :  
 Ենդ հարկանին զզօրս Պարսից դիւթաւալ զգեանի,  
 Ո՛չ սոպարաւ՝ ո՛չ նիզակաւ, այլ աղօթիւք Աերսիսի :  
 Եչկունք աղու, սիրտ իւր հանդարտ, սէր էր համբուն սա ուղղոց,  
 Եյլ ահաւոր և անաչառ էր կշտամբիչ թիւրերոց :  
 Ուղղէր անդու ըզվարս Պասպայ մեր զազրագործ արքային,  
 Ընդ որ սորա յոյժ դառնացեալ՝ թոյն մթերեաց ի սրտին :  
 Ենքուն ջանայր կարձել զաղանի՝ զկեանս Հովուիս գերյարգոյ,  
 Ողջ կուրացեալ մտօք սսէր : « Բարձցուք զչարն ի միջոյ » :  
 Ուստի հրաւէր Հայրապետիս առնէ սիրով սիրալի,  
 Ի պերճ խնջոյս ընդ աւազաց բազմիլ պատուով ի բարձի :  
 Ենդ ի սպասու անձամբ անձին բազմականին կայր ինքնին,  
 « Ղիգն թափէր ջանայր ծածուկ զկեանս բառնալ կենսատուին :  
 Չթիւնախառն ձեռամբ բաժակն Արանելոյն նա մատոյց,  
 Ե՛հ, լուսավառ ծրագ պայծառ օանէս Հայկայ նա շիջոյց :  
 Յայնժամ կօչեաց սուրբն Աերսէս աղերսանօք առ Եստուած,  
 « Օրհնեալ է կամք Մարգասիրիդ, արդար ևս Տէր, ողորմած :  
 Չի այսօր յիս առաքեցիր մարտիրոսի զբաժակ,  
 Որով ի քէն, Տէր ընկալայ նահատակի ըզպսակ » :  
 Եհա տեսեր ըզչարութեան պտուղ Պասպայ արքայի,  
 Որով այսօր տունն Հայկական մնայ անտէր ամայի :

Երդ երթ առ Հայս իբր անդարար՝ գոյժ արկ մահուան լուսատուիս,  
 Թող սուգ առցին համայն լերինք, թող սգասցէ որբ Մասինս:  
 Թող լայ և սուրբ Լեկեղեցին զիւր առաջնորդ անսայթաք,  
 Թող ողբասցէ տունն Թորգոմեան զիւր հովուապետն և հրեշտակ:  
 Եյսուհեակ ողբան աղքատք և համօրէն կարօտեալք.  
 Ջի զերթ խաշինս՝ յանապատի լինելոց են վայրատեալք:  
 Երդ Հայաստան քօ առաջի ուղի հօրդեաց լուսածեմ,  
 Եւ արդ արիտուր դու զայս չափես նորայն շնորհաց բազմադէմ:  
 Իսկ պատանի ի յիշատակ լեր իմ՝ անուանս դու զիտակ,  
 Ես իսալ անուն որբասընունդ Մեծի առն եմ Սարկաւազ:

ԳԱՐՐԻԷԼ ԴՈՒԼԻՔՆԻՍԻՆՅԱՆՅ

Շ--շէշէ:

ԵՂԻՇԷՆ ՅԱՆԱՐԱՅՐ.

Երփին յեթեր-օսկէգոյն, մինչ իւր ձաձանչ մինչ իւր շող՝  
 Շողէր ի նաղ շող ի շող՝ կապուտակին ի փողփող,  
 Եւարայրին վարդազեղ ձօնէր զիւր սէր, զիւր համբոյր,  
 Հայոց քաջաց՝ ուր արիւն խնկէր յերկին խունկ ի բոյր:  
 Գեղափիթիթ ծաղկանց նոր, գեղափիթիթ նոր ի թուփ,  
 Վարդակարմիր արեանց ցօղ, ցօղէր ի շաղ ցօղածուփ,  
 Վարդ ու նարդոս խայտային, ուր մանիշակ, ուր շուշան՝  
 Թերթիցն ի գեղ գեղափառ, ուր արփանայր Շաւարշան:  
 Բոսորագեղ անդ ալիք ջենջ Տղմուտին ողբագոչ,  
 Երփոյն ի լոյս ի ձաձանչ, լողայր սորէր ի խոխոջ.  
 Պարծանաբեր հայրենի յիշատակոք ցօղէր ափ,  
 Ուր քաջք անկան անմըռունջ ի սէր սիրոյն սիրատափ:  
 Իբրև կզնիկ ի սուր նետ, ի սուր սլաք վիրաւոր,  
 Յաղբերականց բղխէ ջուր, փութայր ի գեղ կարևոր.  
 Եյսպէս ծերուկն Լդիշէ վարդին հայոց Վարդանայ,  
 Ի սէր, ի տես ի կարօտ՝ էջ յԵւարայր բացօթեայ:  
 Գաշտին յերես խումբ ի խումբ անկեալ կային ի սփիւռ,  
 Ի հարաւոյ մեղմ անոյշ հնէր լուիկ զենչ զեփիւռ,  
 Բրտանց կայրակ պաշտելի դեռ ի ձակատ շողշողայր,  
 Մինչ զերթ զցօղ Մայիսի՝ որ նոր սորէր զառ ի վայր: